2. Հարցափորձել քե մանուկները ի՞նչ բանով սիրելի կ'ըլլան իրենց ծնողաց եւ ուսուցիչին: Հնազանդութեան պարտականութիւնը զգացնել:

61. Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

1. Փիտիկն ունի հաց ու պանիր,
դիշերը քունը չի տանիր,
2. Շատ լըսէ,
 քիչ խօսէ:
3. Կարգալու ատեն կարգա,
խաղալու ատեն խաղա,
քընանալու ժամանակ ալ քնացիր,
դուն կ'ըլլաս խելացի, առողջ, ժիր:
4. Ինչ որ ցանես,
 այն կը քաղես:
5. Անխելքին հետ ջուր խմէ, հաց կեր,
բայց մի՛ ըլլար ճամբու ընկեր:
6. Գող է, սիրտը դող է,
7. ով չուտտ, փորը կուշտ:

Բերանացի վարժեցնել եւ հասկնալի բնել վիրի առածներուն իմաստը:

62. Պ Ի Ծ Ա Կ Ի Ն Վ Ա Խ Ճ Ա Ն Ը

Անխելք մեղու, ըսաւ պիծակը, դուն բոլոր
ամառը պը՛ղ պը՛ղ կը պըզպըզաս, կը գործես,
բայց քու շինած մեղրը մարդիկ կ'ուտեն:

— Այո՛, պատասխանեց մեղուն, ես ալ
ծաղիկէն ձրի կ'առնեմ անոր հիւթը. ես իմ
վարձքը կ'ուտեմ, մնացածը կը թողում իմ
տիրոջ. ան ինծի փեթակ տուած, հոգ տարած
է: Պիծակը ելաւ ծաղիկին քով գնաց:

Հա՛, յիմար ծաղիկ, դուն անուշ հոտ ունիս,
սիրուն տեսք ունիս, բայց խելք չունիս, ըսաւ:
Ինչո՞ւ կը թողուս մեղուն որ դայ քու համեղ
հիւթը ծծէ ձրի ու տանի անով մեղր շինէ իրեն
համար:

— Վա՛յ, չե՞ս գիտեր, անգործ պիծակ,
պատասխանեց ծաղիկը: Ես ալ ձրի կ'առնեմ
հողէն մոտնդ, երկինքէն ջուր, արեւէն լոյս
ու տաքութիւն. իսկ տա պարտեզպանը հոգ կը
տանի ինծի:

Պիծակը քիչ մնաց որ պիտի ճաթէր
բարկութենէն:

Երկինք չէր կրնար ելլել, արեգակին չէր
հասներ. չէր կրնար հողին փսսա մը հասցնել:

Պարտիզպանին քով վազեց պըզպըզալով:
Պարտիզպանը իմացաւ պիծակին ձայնը, հազիւ
անոր ձեռքին վրայ թառած էր որ կծէ,
պարտիզպանը միւս ամիով հարուած մը տուաւ
ու գետին փռեց զայն: Պիծակին խայթոցը
չունչին հետ բերնէն դուրս թռած էր:

Գլտորեցաւ չար պիծակը, գնաց ինկաւ
ծակը:

1. Պասմել սալ այս գրուած՝ հարցումներու օգ-
նութեամբ:

2. Օգտակար եւ վնասակար միջոցներուն վրայով
խօսակցութիւն:

3. Նոր բառերը ընդօրինակել սալ, բերանացի
բացատրութիւն վերջ:

63. Ա Ն Կ Ա Տ Ո Ի Ն

1. Աս է ան չար կատուն,
որ երբ կ'ըլլայ իրիկուն,
գաղտուկ մը կ'իջնէ մեր տուն.

2. որ կը պըտըտի ամէն անկիւն ,
որ վախ կուտայ տան մուկերուն ,
որ կ'ուտէ միսը , կը լափէ մածուն ,
3. կը սըրբէ բերանը , կը մաքրէ մուրը
երեսին՝ գլխուն ,
որ երբ աքաղաղը կը կանչէ , կու կու լի
կուն , կը փախչի տունէն , կանուխ մը
առաուն ,
4. Որ մէս՛ւ մէս՛ւ կ'ընէ , կանգնած հեռուն .
կարծես թէ կ'ըսէ . ի՞նչպէս էք , քուն թէ
արթուն , ան խորամանկ , չար ու գող
կատուն :

-
1. Կով սկսուած բառերը բնօրինակիլ աս :
 2. Հարցումներով արտաբերելու օգնել վերի գրուածք :



64. Մ Ե Ր Ծ Ո Ի Ն Ը

1. Աս է մեր տան շուն ,
որ գնեցինք աս աշուն ,
որ ունի տեսք մը սիրուն ,
ուշիմ է ու վառվըռուն .
2. Որ կը հըսկէ տունը առաու իրիկուն ,
որ գուրս կը վանէ ան գող կատուն ,

որ շուտ շուտ կ'արթըննայ առտուն,
որ հա՛ֆ հա՛ֆ կը հաչէ օրն ի բուն:

- 3. Որ լափ լափ կը լափէ մածուն,
որ կուտէ կաթ պնակ մը լեցուն.
որ ինծի հետ կը խաղայ մինչեւ իրիկուն,
որ չի տար վրաս ոչ մէկուն.
իմ շնիկս է անի ճերմակ, սիրուն:

1. Խօսեցնել շունին եւ կատուին վրայով: Դասին պարզ բառերով կարն խօսեալ շինել սպու վարժուրիւն բնել:

65. Ե Ր Ե Ք Կ Ձ Ո Ի Կ Ք Ո Յ Ր Ե Ր Ը

(Մ. 2. 3.)

Վարժապետ մը պատմութիւն մը ըրաւ իր աշակերտներուն:

Օր մը խումբ մը աղաք կը գանդատէին իրարու, ըսաւ. «Օ՛ֆ, աս ի՛նչ տգեղ, աս ի՛նչ ծուռ ու մուռ են սա ծ, ձ ու ց գրերը» կ'ըսէին իրարու:

— Տեսէ՛ք, սա ծան կզած ծերի, սաւնած ծռուկ պառաւի ձեւ ունի. ըսաւ մէկը:

— Սա ձան ալ կոտորած պուպրիկի կը նմանի. տե՛ս, վիզը առանց գլուխի մնացած է, կըռնակը կորցած է. կարծես թէ սօքին մէկը կուրծքին սին ըրած են. թեւին մէկն ալ արժուտուած են, ըսաւ ուրիշ մը.

— Սա ցո՛ն քիչ մնացած է որ սօքը ու գլուխը իրարու քով բերէ. անի ամչկոտ, վախկոտ հարսի մը պէս գլուխը ծռած է, ըսաւ միւսը:

Անդիէն ուրիշներ պուպրին, մինակ առչա՞ֆ. հա՛, անոնք շատ ալ նախանձոտ են. երբ դուն մէկին անունը կուտաս՝ միւսը մէջ կ'իյնայ. երբ մէկ գիրով բան մը կը գրես, միւսը կուգայ տեղը կ'անցնի. իրարու կը խառնուին, աղմուկ ու կռիւ կը հանեն իրարու հետ: Ուսուցիչը միշտ ալ մեզմէ մէկը կամ միւսը կը պատժէ իրենց պատճառաւ: Դուն ծ գիրը ձի պէս հնչեցիր, կ'ըսէ: Դուն ձ գիրը տգեղ գրած ես. ասի ցով կը հեզեն ոչ թէ ձով. այսպէս ամէն օր աս տեսակ խօսքեր կ'ընէ:

— Բոլորը մէկ բերան պուպրին, «Եկէք ատ տառերը չը հնչենք. եկէք այդ գրերը չը գրենք. եկէք ատոնց դասը չը սովորինք»:

Քանի մը աղջիկներ երբ լսեցին դուրսէն անոնց աղմուկը և որոշումը, քահ քահ խընդացին հեռուն. «ահա ծոյլերուն քաջութիւնը» ըսին:

1. Հարցափորձել պգտիկները իրենց նախընտրած գրեռու մասին. գրասխասակին կալ ֆարեսխասակի վրայ գրել տալ:

2. Իրենց սիրած գրեռով բառեր, անուաներ ըսել ու գրել տալ:

66. ԵՐԵՔ ԿԶՈՒԿ ՔՈՅՐԵՐԸ — Բ.

(Ծ. 2. 3.)

Երեք կզուկ քոյրերը իմացան որ ծոյլ տղաքներ զիրենք ծաղրած են: Անոնք շատ բարկացան, խօսք մէկ ըրին որ վրէժ լուծեն. ըսաւ վարժապետը:

Ծա քոյրը ծառերուն խրատեց որ ծաղիկ չը բանան, ծիրան ու խնձոր չի տան ծոյլ տղայոց: Ծիծառին ըսաւ որ ծի' ծի' չերգէ անոնց:

Վարժապետէն խնդրեց որ այդ ծոյլ տղայոց աղէկ ծեծ մը քաշէ:

Չա քոյրը աշունէն խնդրեց որ ձմերուկ չի տայ. ձկնորսը ձուկ չի ցուցնէ: Չին ալ ձրի տեղ չի պիտի ձգէր զանոնք որ դան իր բերանը սանձ դնեն ու վրան հեծնան: Բըզէզին խրատեց որ պըծպըծալով երթայ զանոնք ձանձրացնէ, ձեռքերնին խածնէ:

Յո քոյրիկն ալ շատ ցաւած էր, ուզեց որ ինք ալ դաս մը տայ անոնց:

Արտ գնաց, հասկերուն պատուիրեց որ ցարեն չի հասցնեն, ջաղացպանին ըսաւ որ հացի ալիւր չի տայ:

Յին խրատեց որ անոնց բակին վառեակներուն վրայ ցատկէ, հաւերը վախցնէ, ցիր ու ցան ընէ փախցնէ՝ որ ալ հաւկիթ չ'ածեն:

Հովուն աղաչեց որ ցուրտ քամի մը փըչէ, զանոնք մըսեցնէ:

— Հա' դի' տէք, ըսաւ վարժապետը. այդ ծոյլ տղաքը շատ զըզացին, խոտացան որ իրնց դասին ծ, ձ և ց դասերը լաւ սերտեն: Երեք կուզուկ քոյրերն ալ ներեցին անոնց:

Ծ քոյրը ծիածանին մէջէն ժըպտեցաւ ու փունջ մը ծաղիկ ընծայեց:

2. քայրը ձմերուկ, խնձոր ու դեղձ գըլտորեց
անոնց ձորէն վար :

3. քայրն ալ ցորենի ոսկի հասկերու մէյմէկ
փունջ նետեց անոնց :

1. Չաս զաս սիւնակներու մէջ ընթօրինակել սալ
ծ, ձ եւ ց գիր ունեցող բառերը . խօսքի նիւթ ընել
զանոնք :

2. Այդ երեք սառերուն որոշ հնչումը արտաբերել
սալ՝ դասին մէջ գործածուած բառերով :

67. Մ Ե Ղ Ո Ի Ն Կ' Ը Ս Է

Վարուն, ամառ ամէն օր

ես կ'երթամ լեռ, դաշտ ու ձոր .

կ'աշխատիմ ես միշտ անվերջ,

մեղր փընտուել ծաղկանց մէջ .

պը՛ղ, պը՛ղ, պը՛ղ ես կ'երթամ,

պը՛ժ, պը՛ժ, պը՛ժ, կը դառնամ :

68. Ճ Ա Ն Ճ Ը Կ' Ը Ս Է

Փոքրիկ ճանճ եմ խաղասէր,

միշտ կը թըռչիմ վար ու վեր

խոշոր տան մը բակին մէջ,

չըրջան կ'ընեմ ես անվերջ .

բը՛ղ, բը՛ղ, բը՛ղ կ'երթամ,

վը՛ղ, վը՛ղ, վը՛ղ կուգամ :

1. Արտասանութիւն եւ խօսակցութիւն մեղուին եւ
նաննին շուրջ :

2. Միջասներուն ձայներուն ընթանեցնել — (մեղու,
նպուռ, նանն, բզեզ, մթեղ) :

69. Մ Օ Ր Ո Ի Չ Ա Ի Կ Ի Ս Է Ր

Սիրարփի թուղթ մը ունէր ձեռքը, վրան
գրած էր՝

Սեր Սեր

տարաւ մօրը ցուցուց զայն ու հարցուց .
մայրի՛կ, ըսէ՛, այս երկուքէն ո՛ր մէկը կուտաս

ինծի: Մայրիկը գրկեց ու համբուրեց Սիրարիին: Ա՛խ, զաւակս, ըսաւ. այս սէրը մայրիկիդ սիրտէն կը հոսի, միշտ քուկդ է անի: Մայրիկը երբ քեզ կը սիրէ, ըսաւ, մածունին այս սէրն ալ կուտայ քեզի: Բայց դո՞ւն ի՛նչ պիտի տաս մայրիկիդ, հարցուց:

— Ես ալ երկու պաշիկ կուտամ, մայրիկ, մէկը սէր է, միւսը սեր. պատասխանեց Սիրարիի: Մայր ու զաւակ զիրար համբուրեցին:

1. Հարցափորձել քե ինչո՛ւ մայր եւ զաւակ իրար կը սիրեն շատ:

2. Թելաբել քե մանուկները պարսին հնազանդիլ իրենց ծնուլաց. սիրել զանոնք ու օգնել անոնց:

70. Ա Ր Թ Ի Ն Կ Ը Շ Ա Հ Ի

Մարդ մը օրին մէկը քաղաք բերած էր կապիկ մը, արջ մը եւ օձ մը: Ամէն մարդ կը փափաքէր որ տեսնէ զանոնք:

Մանկապարտէզին վարժուհին պատուիրեց իր պղտիկ աշակերտներուն որ ամէն մէկը երկու

տասնոց բերէ կէսօրին, այդ կապիկը, արջը եւ օձը տեսնելու համար: Արթին երբ տունէն դուրսը դարձաւ մէկ տասնոց միայն բերած էր:

— Ա՛հ, Արթին ես չը՞սի որ երկու տասնոց պիտի բերէք, ըսաւ վարժուհին:

— Այո, օրիորդ, բայց մայրիկիս քով մէկ տասնոց մնացեր էր, ան ալ ինծի տուաւ. պատասխանեց Արթին:

Չ՛ըլլար, Արթին, չ՛ըլլար, կրկնեց վարժուհին. գնա շուտ մը երկու տասնոց բեր որ տեսնես:

Արթին պահ մը ատրեցաւ. բայց յանկարծ ձեռքին տասնոցը նորէն վարժուհիին երկնցուց ու ըսաւ. օրի՛սրդ, կը խնդրեմ, առ այս մէկ տասնոցը, ես ալ աս աչքս կը գոցեմ ու մինակ մէկ աչքով կը տեսնեմ:

Վարժուհին չի կրցաւ մերժել Արթինին այս խեղացի խնդրանքը:

Արթին հաղիւ ութը տարեկան կար, սիրուն ու խեղացի մանուկ մըն էր:

1. Նկարագրուրիւն եւ նկատագրուրիւն կապիկին, արջին եւ օձին՝ պատկերներու միջոցով ի հարկին:

2. Թուել ու գրել սալ մանուկներուն ծանօթ կենդանիներու անունները:

71. Բ Ա Ր Ե Ի Է

1. Առտուն «բարիօլոյս» կ'ըսենք իրարու .
երբ կէսօր է կ'ըսենք, «բարի կէսօր» .
երբ իրիկուն ըլլայ կ'ըսենք «բարի իրիկուն» .
երբ ալ մութ է «գիշեր բարի» կ'ըսենք :
2. Երկու ծանօթ մարդիկ երբ իրարու քով
գան, «բարեւ» կ'ըսեն . երբ մէկը մեկնի,
«մնաս բարով» կ'ըսէ . իսկ միւս մարդը
կ'ըսէ . «երթաս բարով» :
3. Մենք կը բարեւենք մեր տեսուչը, ուսուցիչը,
վարժուհին, ծնողքը, ընկերը, մեզի ծանօթը
ու բարեկամը, երբ անոնց կը հանդգինք ու
երբ անոնց քովէն կը մեկնինք :
4. Ան մանչը ու աղջիկը որ այսպէս բարեւ
կուտայ ու բարեւ կ'առնէ, անի քաղաքավար
է, կ'ըսենք :

Ո՞ր ասեմ, ի՞նչպէս եւ ո՞րոնք պիտի բարեւենք :

72. Վ Ա Ր Գ Ը Ի Ն Չ Կ' Ը Ս Է

1. Ամենքը դիւ կը կոչեն
ծաղիկներու թագուհի .
թերթերս անուշ կը բուրեն,
տեսքս սիրուն գոյն ունի :
2. Թերթերուս մէջ հիւրասէր,
կուգան հանդիստ առնել միշտ,
մեզու, զատիկ ու թիթեռ .
փուշերէս մարդ չըզգար վիշտ :
3. Վարդին զարդն է պարզ տերեւ,
Սիրէ դուն ալ պարզութիւն,
եթէ վարդ մ'ես արդարեւ :

1. Արսասանութիւն :

2. Վարդին եւ ծաղիկներուն վրայով խօսակցիլ :
Ծանօթ ծաղիկներուն անունները գրել սալ :



73. Ի Մ Դ Ր Օ Շ Ա Կ Ս

«Ահա եղբայր քեզ մի Գրօշ»

- 1. Երբ տեսնես զայն՝ բարեւէ,
- Երբ բռնես զայն՝ համբուրէ,

անոր միշտ յարգանք ցուցուր,
պարծաքով զայն բարձրացուր :

- 2. Բարձրացուր ս'վ պատանի,
Թող անի միշտ ծածանի,
ու դուն գոչէ, հա՛յ մանկիկ .
«Կեցցէ՛, կեցցէ՛ իմ հայրենիք» :

74. Ա Չ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

« Ես անբարբառ մի մանուկ,
երկու ձեռքըս պարզեցի,
եւ իմ անդօր թեւերով,
ազատութի՛ւն գոչեցի » :

- 1. Ներկայացուցի հայկական դրօսակը, զայն բարեւելու յարգալի կեցուածքով : ձանցուցի հայրենիք եւ անոր սերը :



75. Վ Ի Ճ Ա Կ

1. Այսօր վիճակ է, վիճակհան.

Եթե՞ր աղջիկներ վիճակ ձգելու եկան,
 եթե՞ր աղջիկներ եթե՞ր կուժ առին,
 եթե՞ր կուժով եթե՞ր աղբուրէ շուր բերին,
 շուր բերին սափորին մէջ լեցուցին:
2. Այսօր վիճակ է, վիճակհան.

Եթե՞ր աղջիկներ վիճակ ձգելու եկան,
 եթե՞ր աղջիկներ սար ձոր գացին,

- Եթե՞ր տեսակ ծաղիկ ժողվեցին բերին,
 Եթե՞ր տեսակ ծաղիկ սափորին մէջ լեցուցին:
3. Այսօր վիճակ է, վիճակհան.

Եթե՞ր աղջիկներ վիճակ ձգելու նստան,
 ամէն աղջիկ զատ զատ մուրաղ ուզեց,
 մուրաղին սիրով մէյմէկ նշան հոն ձգեց,
 սափորը շուրով, ծաղիկով, թանկ զարդերով
 զարդարեց:
 4. Այսօր վիճակ է, վիճակհան.

Եթե՞ր աղջիկներ վիճակ նայել սկսան,
 դուրս հանեցին մէկ ծաղիկ, մէկ նշան.
 վիճակտեսը տաղերով կարգաց անոնց քսիս,
 ամէն մէկուն գուշակեց մէյմէկ փայլուն
 քսիս,
 անոնց երեսին շուր ցօղեց, ծաղիկ ցանեց.
 սիրուն ծաղիկներով տուն ճամբորդեց:

1. Քրիստոսի Համբարձման Հինգօրեքի օրը վիճակ
 ալ կը կոչուի: Հետեւեցեք պզտիկները այս օրուան
 տեսական այս սովորութեամբ:

2. Թելադրեցեք որ իւրաքանչիւրը ընդօրինակէ եւ
 ներկայացնէ այս գրուածին մէջէն իր սիրած մէկ տղր
 կամ խօսք:

76. Ճ Ե Ր Մ Ա Կ

1. Ահ, պապուս գրուխին ձիւն մաղեր են, ճերի ճերհալ: դարձեր է, ծերացեր է կ'ըսեն:

2. Գաշտին մէջի ձիւնը հալեր է, փափուկ շուշանը ճերմակ բաժակ բացեր է:

3. Մեր տան աղանին բամպակի պէս ճերմակ թեւեր առեր է:

4. Այժ ու կով դաշտէն տուն կը վաղեն, անուշ կաթ կուտան: Մաքուր աղջիկը, խելօք մանչը միշտ ճերմակ երես են:

5. Ճերմակ կաւիճով սեւ տախտակին վրայ կը գծեն, սեւ մեւանով ճերմակ թուղթին վրայ կը գրեն:

6. Կաթը, թանը, պանիրը, մածունը, սերը, հաւկիթը ճերմակ են. ճերմակ են թուղթը բամպակը, կաւիճը, ձիւնը:

7. Կարապը, աղանին, ճագարը ճերմակ տեսք ունին. արծաթը, մարգարիտը, լուսինը, աստղերը ճերմակ փայլուն են:

Թուել եւ գրել սալ այն ճերմակ բաներ, որոնք ծանօթ են:

77. Կ Ո Վ Ը Կ Ա Թ Կ Ո Ի Տ Ա Յ

1. Կովը խոտ կ'ուտէ, մեղի կաթ կուտայ: Այս կովը երկու կովկիթ կաթ կուտայ:

2. Այդ կինը բարի տիկին մըն է, անի կեր կերակուր եփող ժրաջան տանտիկին է:

3. Կովէն կաթ կը կըլթէ, կաթով կ'եփէ կաթնապուր. կը շինէ սեր, պանիր, մածուն, թան, թանապուր: Մածունը կը հարէ թան կ'ընէ, դունտ դունտ կարագ կը հանէ. թանը կ'ընէ չորթան. կը շինէ թանապուր, չոր թանապուր:

4. Կաթ թան խըմէ որ մեծնաս: Սեր կարագ կեր որ գերնաս, դասերդ աղւոր գիտնաս: Մածուն, միշտ մածուն կեր դուն, առողջ կ'ըլլաս, Մաժա'կ: Երբ առողջ ես, դու լաւ կը խաղաս, շիտակ կը կարգաս, շուտ կը պառկես, շատ կը քնանաս, շուտ կը մեծնաս: Գուն կ'ըլլաս քիչ քիչ մեծ քաջ մանչ մը: Գուն ալ կ'ըլլաս խելացի, աշխատասէր աղջիկ մը:

Խօսակցիլ կովուն վրայով: Անոր ընծայած օգուսները բուել սալ: Գրել սալ կարիքն եւ իրիւ շինուած քացաններուն անունները:

78. Կ Ա Ր Մ Ի Ր

1. Այս մանուկը մանկապարտէզ կ'երթայ, անի կարմիր գոգնոց հագած է:

2. Կաղմոս գլուխը դրած է կարմիր գգակ, ձեռքը առած է կարմիր կողքով գերք մը:

3. Կեռասը տեսքով մութ կարմիր է, անուշ համ ունի. նարինջը բաց կարմիր գոյնով է, անուշ հոտ ու համ ունի:

4. Չմերուկին միջուկը արիւնի պէս կարմիր գոյն կ'առնէ, շաքարի պէս քաղցր համ կուտայ:

5. Երբ զատիկ կուգար, մայրիկը կարմիր հակիթ կը նաչխէր ու կը բաչխէր. հայրիկը կարմիր գլխարկ ու կարմիր կօշիկ կը բերէր մեզի նուէր:

6. Կարապետ կարմիր խաղող պիտի կըլծէ, պիտի քամէ. մեծ պապը կարմիր գինի պիտի խրմէ:

7. Աքաղաղը կարմիր կատար կը ճօճէ. հաւը կարմիր բբուկ կը ցուցնէ:

Թուել եւ գրել սալ կարմրագոյն իւրեր՝ կարն խօս-
փերսլ:

79. Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

1. Մարգը ունի տուն, հոն կ'ապրի, կը գործէ. թըռչունը ունի բոյն, հոն ձու կ'ածէ:

2. Հաւը ունի հաւնոց, հոն կը թառի. սոխակը ունի վանդակ, հոն կը թըռչըտի:

3. Մեղուն ունի փեթակ, հոն մեղր կը շինէ. շերամը կը կապէ խողակ, անոր մէջ կըմտնէ:

4. Տան կենդանին ունի ախոռ, հոն կը կենայ, գաղանը կը փորէ որջ, հոն կը սողայ:

80. Կ Ա Ն Ա Ն Չ

1. Երբ դարուն գայ, կարծես թէ դաշտ լեռ ու ձոր կանաչ են հագած:

2. Գետինը կանաչ խոտ բուսած է, ամեն ծառ ու թուփ կանաչ տերեւ բացած է:

3. Աշունը կուտայ մեղի ձմերուկ, վա-
րունդ, շատ մը տեսակ բանջարեղէններ.
անոնք կանաչ գոյն ունին:

4. Խակ խաղողը, խակ սալորը կանաչ
գոյն ունին, ով որ ազոխ ուտէ կը հիւանդանայ:

5. Անձրեւէն վերջ երբ արեւ ծագի՝
երկինքը կանաչ—կարմիր. ծիածան մը կամար
կը ձգէ:

6. Ծիածանը կարմիր—կանաչ—կապոյտ
գոյներ ունի, ատոր համար կանաչ—կարմիր
գօտին է կ'ըսեն:

7. Իտալական դրօշակը կանաչ—ճերմակ—
կամիր գոյնով է:

Կանաչ գոյնով բաներ համեմել եւ գրել սալ:

81. Ա Ն Ն Ի Կ Ո Ի Մ Ա Ն Ն Ի Կ

1. Աննիկ ճո՛ւ ճո՛ւ կանչեց, Մաննիկ կեր
կեր կուտ առաւ բակ եկաւ:

2. Հո՛ւ, հաւ մը տեսաւ ատի, թառէն
իջաւ, վառեկը վաղեց եկաւ, կըտ կըտ կերաւ,
աքլոր մը ցատկեց, եկաւ ընկեր եղաւ:

3. Հաւը ելաւ թառը թառեցաւ. կա՛հ
կա՛հ ձայն ձգեց, հաւկիթ ածեց. մաման եկաւ
կարաւը մորթեց, եղով տապկեց. հաւկիթ
խաշեց, լաւ փխլաւ մը եփեց:

4. Աննիկ, Մաննիկ ու մաման սեղան
շիտկեցին, նըստեցան կուշտ մը կերան խմեցին:
Ճաշէն վերջ իրարու պատմութիւններ պատմեցին.
Երգեցին ու ելան պտոյտի գացին:

82. Կ Ա Պ Ո Յ Տ

1. Կապոյտ է խաղաղ երկիրնքը: Կապոյտ երկիրնքին մէջ կը փայլին արեւը, լուսինը ու աստղեր:

2. Կապոյտ են ծովը ու գետը, երբ խաղաղ են: Կապոյտ և ջինջ ջուրին մէջ կը լողան մեծ ու պզտիկ սիրուն ձուկեր:

3. Լեղակը կապոյտ ներկ է: Մանիշակը կապոյտ ծաղիկ է: Լեղակով կապոյտ կը ներկեն ճերմակ կերպասը: Պերճուհի հագած է կապոյտ գոգնոց մը:

4. Ո՞ր աղբին գրօշակը կապոյտ գոյն ունի: Կապոյտ—ճերմակ—կարմիր է խմ գրօշակս. անի սլիախի ծածանի շարունակ:

Թուէլ եւ գրել սալ կապոյտ գոյնով ի՛նչ բաներ որ տեսած են:

83. Հ Ա Յ Ե Լ Ի

1. Ի՞նչ սիրուն հայերի
Ի՞նչ աղւոր կը փայլի.
Ինձի հետ կը խընդայ,
Ինձի պէս կը խաղայ.
Կը շարժի վար ու վեր,
Կը խօսի, բայց չեմ լսեր:

2. Բայց ինձի շատ նման է.
Դո՛ւն ես, դո՛ւն ես կ'ըսէ:
Երբ կոկիկ հագուած եմ,
Կարծես թէ ինձ կ'ըսէ.
Շատ սիրուն ես, Շաքէ՛:

84. Դ Ե Ղ Ի Ն

1. Ոսկին դեղին է, գինը շատ սուղ է:
Սեխը դեղին կեղեւ ունի, միջուկը համեղ է:

2. Լեմոնը դեղին կեղեւ ունի, միջուկը թթու է: Սաթը դեղին գոյն ունի՝ թանկ գին ունի:

3. Չինացիք դեղին ցեղ կը կոչեն: Դեղին գոյնով դրօշակ տեսե՞ր էք:

4. Երբ աշուն կուգայ ծառին տերեւները կը դեղնին ու քիչ քիչ գետին կը թափին:

5. Ապրիլ—մեռնիմը ճերմակ թերթերով դեղին կոճակով ծաղիկ մըն է: Հաւկիթը արծաթ սնակ մէջը դեղին գընդակ է:

6. Աս վարդը դեղին է: Ըսէ տեսնեմ, Դեղձանիկ, ուրիշ ի՞նչ բաներ դեղին գոյն ունին:

դեղ, գին, թան, շուն, ծառ, գետ, հաւ, բառերէն ուրիշ բառեր կազմել սուէք գրասխասակին վրայ, որ. դեղ՝ դեղին, գին՝ գինի, եւն.:

85. Ժ.Մ.ՄԱՆԱԿ

1. Յորեկ մը և գիշեր մը կը կազմեն մէկ օր: Մէկ օրը քսան և չորս ժամ է:

2. Երբ արեւը ծագած է առտու է կ'ըսենք. երբ անի ճիշդ մեր գլուխին վերեւ կը փայլի՝ կես օր է. իսկ երբ կ'իջնէ ու մարը կը մանէ՝ իրիկունն է կ'ըսենք:

3. Արեւը ծագած կողմին կ'ըսենք արեւելջ, արեւը մարը մտած կողմին կ'ըսենք արեւմուտք. երբ երեսնիս դէպի արեւելք դարձուցած ենք՝ մեր ձախ կողմը կ'իյնայ ճիւղիս, իսկ աջ կողմը՝ հարաւ. այսպէս, երկրիս չորս կողմերը կը՝ Սան արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ:

4. Կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ շաբաթ օրերու անուններ են: Եօթը օրը մէկ շաբաթ է:

5. Չորս շաբաթ մէկ ամիս կ'ընէ: Տասն երկու ամիս իրարու ետեւէ կուգան և մէկ տարի կ'ընեն:

6. Տարին ունի չորս եղանակ, Գարուն, Ամառ, Աշուն, Չմեռ, մէյ մէկ եղանակ են:

- 1. Խօսեցե՛ք ժամանակի բաժանումներուն վրայ:
- 2. Առանձինն սիւնակներու մէջ օրինակել սուէք ժամանակի վերաբերեալ անուններ:

86. Ա.Ռ.ՈՒՆ, Ա.ՂԲԻԻՐԸ

ԳՐՆ ԳՐՆ ԿՐ ԳՐԼ ԳՐԼԱՅ ԿՐՈՒՆ,
 ԿՐ ՎԱՂԷ միշտ, կ'երթայ հեռուն.
 ԿՐ հոսէ ջո՛ւ ջո՛ւ, ջո՛ւ անուշ ջուր,
 Որ խոհենք մենք միշտ, ըլլանք մաքուր:

87. Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ

ԿՐ քալէ կամաց կամաց,
 Թեւերը մերթ գոց, մերթ բաց.
 Բերան չունի՝ բայց կ'երգէ,
 Յորեկ գիշեր կը համրէ,
 Կը ցուցնէ ժամ ժամանակ,
 Կ'աշխատի միշտ թա՛ք, թի՛ք, թաք:

Արսասանութիւն :

88. Մ Ի Շ Տ Ի Ն Ծ Ի Պ Է Ս

Ձապէլ վարժունի եղաւ, վարդունի
 աշակերտ:

Ձապէլ ինչ որ ըսէր, վարդունին ալ իրմէն
 ետք. «ձիշտ ինծի պէս» պիտի կրկնէր, այսպէս.

- Ձ.— Ես գիրք մը առի դպրոց գացի.
- Վ.— ձիշտ ինծի պէս.
- Ձ.— Դասարան մտայ, բարեւեցի ամենքը.
- Վ.— ձիշտ ինծի պէս.
- Ձ.— Դաս մը կարդացի, գիր գրեցի.
- Վ.— ձիշտ ինծի պէս.
- Ձ.— Գրեցի ու երգ մը երգեցի.
- Վ.— ձիշտ ինծի պէս.
- Ձ.— ճանճը բը՛զ բը՛զ, պիծակը նը՛ժ պը՛ժ
 ինծի հետ երգել ուղեցին.
- Վ.— ձիշտ ինծի պէս.
- Ո՛հ, չէ՛ չէ՛, ըսաւ վարդունի, տեղէն
 ելաւ, բարկացաւ, ոտքը գետինը զարկաւ. չէ՛
 ատի չեմ կրկնէր ըսաւ:

Երկու հոգիով ներկայացնել տւե՛կ խօսակցութիւնը:



89. Մ է Կ ու Ե Ր Կ Ո Ւ

1. Մէկ բերան է որ կը խօսի,
մէկ գլուխ է որ կը խորհի,
մէկ սիրտ է որ կը բաբախէ:
2. Երկու ախանջ շուտ կը լսեն.
Երկու աչք շատ բան կը տեսնեն:
3. Երկու թեւ են որ կուտան թափ,
Երկու ափ ալ կը զարնեն ծափ:

4. Երկու ձեռք, չէ՛, չեն ըներ քէն,
ալ ձախ, քոյր—եղբայր կը գործեն:
5. Երկու ուս կը տանին ամեն բեռ,
Երկու սրունք կ'երթան դաշտ, ձոր, լեռ:
6. Երկու այտ վարդ կը ծաղկի,
Երկու շուրթէ մեղր կը հոսի:
7. Մէկը բաւ է, երկուքը լաւ է.
Երկու աղջիկ սիրով կը խաղան,
Երկու մանչ լաւ ընկեր կ'ըլլան:

-
1. Թուած գգայարաններուն եւ մարմնոյ մասե-
րուն պատճօներուն վրայով խօսակցիլ:
 2. Իրերաօգնութեան պէտքն զգացնել:
-

90. Ի Ա Ղ Ա Լ Ի Կ Ն Ե Ր

1. Լեւոն հոլ մը ու Լար մը առած է: Անի Լարը կը փաթթէ հոլին բոլորտիքը, մէկ ծայրը կը բռնէ իր ձեռք ու գետին կը թապլէ, հոլը կը դառնայ արագ արագ. երբ որ յոգնի, կռնակին վրայ կ'իյնայ ու ալ չի շարժիր:

2. Աստղիկ ունի ասեղ, թեւ, մատնոց: Անի նաչխուն հլուններ կը շարէ թեւին վրայ, կը շինէ գեղեցիկ թեւնոց, մատնի, օղ ու մանեակ:

3. Գուրգէն ու Վարուժան բերած են լեցուն ասպրակ մը վէզ, գնդակ: Անոնք ուղիղ գիծ մը կը քաշեն գետինը, անոր շուրջ կը գծեն կլոր շրջանակ մը, քիչ մը հեռուն կանգնած նշան կ'առնեն անոնց: Ով որ վէզը կամ գնդակը շրջանակէն դուրս ցատկեցնէ, անի կը շահի:

4. Երբ դասի դադարին զանգակը կը հնչէ վարժուհին խաղարան կ'իջնէ: Զաւէն, Եղիշէ, Մուշեղ, Թորգոմ, Անահիտ, Հեղինէ, Հայկանուշ ու Արաքսի կը հաւաքէ՝ որ միասին խաղան:

Վարժուհին անոնց կը բաշխէ թփ, շրջանակ, չուան: Անոնք խումբով կը խաղան չուան ցատքով, թփ հասցնով, շրջանակ գլտորով, կատու ու մուկ: Ա՛հ, սրչափ ուրախ են անոնք. ի՛նչ սիրով կը խաղան իրարու հետ: Անոնք դասընկերներ են, գիտէ՞ք:

1. Թուել սուեք իրենց սիրած խաղերուն ու խաղալիքներուն անունները եւ անոնցով հետաքրքրուեցե՛ք:

2. Ընճանի խաղալիքներ ներկայացուցե՛ք եւ գրել սուեք անոնց անունները:

91. Գ Ա Գ Ի Կ Ո Ի Ա Ր Ս Ի Ն Է

1. Երբ կը լուսնայ, մայրիկը ձայն կուտայ. Գագի՛կ, Ա՛րսինէ, Ելէք ձեր անկողինէն. ահա արեւը ծագեր է, դպրոց երթալու ժամանակը կը մօտենայ:

2. Գագիկ ու արսինէ երբ կ'արթընան, անկողինէն դուրս կը ցատքեն, կը հագուին, կը

չուան իրենց ձեռքերը՝ երեսնին ու մաքուր անձեռոցով կը չորցնեն: Յետոյ մաշերնին կը սանտրեն, մաքուր կոշիկնին հագած ներս կուգան:

3. Անոնք բարի լոյս ըսելով կը համբուրեն իրենց հօրը և մօրը ձեռքերը: Երբ ժամանակը կանուխ է, սանդուխէն վար կ'իջնեն, կարճ պոյոյ մը կ'ընեն բակին մէջ, ու դաս կը սերտեն:

4. Նախաճաշի ատեն նորէն վեր կ'ելլեն, կը ճաշեն: Անոնք գիրքի պայուսակը առած «մնաս բարով» կ'ըսեն իրենց ծնողաց ու վարժարան կուգան:

5. Գազիկ և Արսինէ մաքուր ու կոկիկ են միշտ, հնազանդ և աշխատասէր ալ: Շիտակ կը կարգան, և լաւ գիր կը գրեն, ուրախ զուարթ կը խաղան ու անուշ երգեր ալ կ'երգեն:

6. Վարժուհին շատ գոհ է իրենցմէ, իր ընկերները կը սիրեն զիրենք, իսկ տեսուչը կը կօվէ զանոնք:

Հարցումներով՝ սպաւորել օրուան զբաղումները՝ եւ ամեն ժամու յատու աշխատութիւնը:



92. Թ Է Յ Ա Ս Ե Ղ Ա Ն

1. Թէյին ամանը բեր մէջը ջուր լեցուր, թէյամանը կրակին վրայ դիր տաքցուր, կրակին վրայ շատ տաքցուր եռացուր, ջուրը եռացուր կրակը մարէ անցուր:

2. Թէյամանը վար առ, մէջը թէյ լեցուր, գաւաթ մը բեր մէջը քիչ քիչ լեցուր,

Թէյը պօրզուտէ անցուր, շաքար ձգէ հալեցուր :

3. Ոսկեգոյն թէյը խառնէ պաղեցուր, ումպ ումպ դուն ըմպէ, հիւրին ալ հրամցուր, հացիկ ու կարագ ալ հետը միացուր :

93. ՉԱՐԵ ՀԻ ՀԱԳՈՒՍՏԸ

1. Չարե՛ն տասը տարու մանչ մըն է, անի կըրնայ ինքնիրեն հագուիլ :

2. Սրունքները տախտ կը քաշէ, կը հագնի շապիկ, անոր վրայ ելակ ու բաճկոն կը կրէ :

3. Ոտքը գուլպայ ու ոտից կամ կօշիկ կը հագնի : Ճաշի ատեն կուրծքը կը կապէ կըրծիկ . խակ երբ դպրոց երթայ՝ կարմիր կամ սեւ գոգնոց մը կը հագնի :

4. Գլուխը կը դնէ դլխարկ կամ գդակ : Անոր հայրիկը գնած է վիզին համար օձիք մը և վրան կապելիք փողկապ մըն ալ :

5. Մայրիկը ձեռքին համար բուրդէ ձեռնոց ու թեւին համար թեւնոց հիւսած է . երբ ցուրտ ըլլայ Չարե՛ն ձեռքը ու թեւը կ'անցնէ զանոնք :

Գերձակը գրպաններ բացած է բաճկոնին ու տախտին երկու կողմերը :

Չարե՛ն շատ մաքրատէր է . ուտելիք կամ խաղալիք չի պահեր գրպանին մէջ :

Այլ կողմի գրպանը կը դնէ թաշկինակը, իսկ ձախ կողմի գրպանը մատիտ, թուղթ ու քարէզրիչ մը :

Հայրիկը խոտացած է որ անոնց համար ալ գրչատուփ մը բերէ :

Չարե՛ն կոկիկ մանչ մը և փրփան աշակերտ մըն է :

Յուցնել սալ հանգերձին մասերը . արձագրել անոնց անունները :

94. Լ Ո Ի Ս Ի Ն

1. Ոսկի արեգակը գնաց մարեցաւ,
արծաթ լուսնակը ծագեցաւ:
Եկո՛ւր եկո՛ւր, սիրուն լուսին,
աստղերուն հետ միասին:
2. Լոյս տուր մեզի, լուսին,
քեզի բարձ՝ ամպերը բամպակ,
քեզի քօղ՝ ամպերը ճերմակ:
3. Արծաթ լին մը քեզի հայելի.
Ելիր, լուսին, բարձր ելիր,
բարձր ելիր, վերէն վար հայելի:

Արսասանութիւն: Ծօռափել մանկական բմբուռովը
արեգակին, լուսին ու աստղերուն մասին:

95. Կ Է Տ Ե Ր Ը

, . = ' °

Գիտէք, տղաք, այս կէտերը մէկ մէկ
նշաններ են, անոնք ձեզի կ'ըսեն թէ կարդալու
առան քիչ մը կեցէք, հանգիտ առէք, շունչ
քաշեցէք. սուր հնչեցէք, ձայներնիդ երկարեցէք,
կամ հարցում ըրէք՝ ո՛ր գրի վրայ որ մեզ
տեսնէք, ո՛ր բառի առջեւ որ մեզի հանդպիւք,
այսպէս.

(,) ստորակէտը կ'ըսէ թէ՛ իմ քովս կարճ
շունչ մը առ ու անցիր:

(.) միջակէտը կ'ըսէ, երբ գիտ տեսնես քիչ
մը երկար շունչ առ.

(=) վերջակէտը կ'ըսէ, կեցիր, երկար
հանգիտ մը առ ինձի մօտ:

(°) պարօյկ ունեցող բառը կը տեսնե՞ս,
դուն ալ ձայնդ իրեն պէս կ'ըրցնելով սխալի
հարցնես որ՝ պատասխան մը առնես:

(Ր) Երկարը կ'ըսէ, երբ բառի մը վրայ
 երկարած տեանես, դուն ալ ձայնդ երկարցուր.
 այսպէս, ա՛խ, որբ եմ ես, մայրիկ չունիմ.
 կամ, կեցցէ՛ Հայաստան: Կը տենե՞ք, ա՛խ ու
 կեցցէ՛ բառերուն վրայ ալ երկարներ կային,
 բայց ա՛խ ըսած ատենս տխուր ձայն հանեցի.
 կեցցէ՛, կարգացած ատենս լեցուն շունչով,
 երկար և ուրախ ձայն մը ձգեցի:

Երբ շիտակ ու գեղեցիկ կը կարգաք ամէն
 մարդ ալ կը գովէ ձեզ ու մտիկ ընել կ'ուզէ:

Գրասխասակին վրայ ցուցուած պարզ օրինակներով
 հասկնալի ընել նշանակուած կէտերուն գործածութիւնը՝
 յարմար առողջանութեամբ մը:

Սիրելի Արտակ,

Վարդավառը կը մօտենայ: Յաջորդ
 շաբաթ մենք ուխտի պիտի երթանք Սուրբ Նշան
 վանքը: Հայրս ձի մը պիտի վարձէ, եղբայրս
 ալ ինծի համար ֆըշֆըշուկ մը պիտի առնէ,
 անով վարդավառ պիտի խաղանք: Քուրիկս
 կ'ուզէ որ դառնուկը ու շնիկն ալ իր հետը տանի:

Մենք շատ աղւոր խաղեր պիտի
 խաղանք հոն, անուշ բաներ պիտի ուտենք:

Կը սիրե՞ս որ դուն ու Աշխէն ալ մեզի
 ընկերանաք, կը յուսամ թէ մայրիկդ չի մերժեր:
 Պէտք է որ միասին երթանք:

Անոր ձեռքը կը համբուրեմ, Աշխէնին
 և քեզի շատ բարեւներ ունիմ:

Ընկերդ

Նուպար

Հինգշաբթի

Հեռու տեղեր գտնուող մարդեր իբրև հետ նա-
 մակով յարաբերութիւն պահելու գաղափարը տուեմ:

97. ԱՐՏԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Սիրելի նուպար,

Երէկ նամակդ առի, ա՛հ, շատ ուրախացայ: Անմիջապէս տարի կարգացի զայն իմ մայրիկիս ու հայրիկիս ալ: Անոնք հաճեցան որ ես ու Աշխէն ալ ձեզի ընկերանանք: Հայրիկս ինձի ալ ֆըշֆըշուկ շինել կուտայ, մայրիկս ճամբու զգեստներ պիտի կարէ:

Օ՛հ, ե՞րբ շաբաթ պիտի գայ:

Աշխէն շատ ուրախ է, կը բարեւէ: Հայրիկս ու մայրիկս ալ կը բարեւեն ձեզի: Հապա՞ ես, ցտեսութիւն կ'ըսեմ:

Ընկերդ

Արտակ

Հինգշաբթի

Թելադրեցիք որ մեկու մը երկու տղոց նամակ մը գրեն:

98. ՃԱՇԻ ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ

1. Երբ ճաշի ժամանակ գայ Արտակ ձայն կուտայ ամենուն: Արշակ ներս կ'երթայ, սեղանին առջեւ կը նըստի, անի կ'ըստասէ որ մայրիկը կերակուր բաժնէ. Արշակ ու Արտէն զատ պնակէ կը ճաշեն:

2. Անոնք սփռոց մը կը ձգեն իրենց ծունդին վրայ, հացէն պըզտիկ խածեր կ'առնեն: Ապուրը դգալով կ'ուտեն, ջուրը կաթը գաւաթով կը խմեն ումպ ումպ:

3. Փոքրիկ դանակ ու պատառաքաղ ալ ունին. դանակը կը բռնեն աջ ձեռքով, պատառաքաղը կ'առնեն ձախ ձեռք. կերակուրի մանր կտոր մը բերան կը տանին, կտորը լաւ կը ծամեն ու ետքը կը կըլլեն:

4. Երբ ալ կըշտացած են, ճաշի աղօթքը կ'ըսեն, սեղանը կը ժողվեն, հայրիկին մայրիկին շնորհակալ կ'ըլլան ու կ'ելլեն դուրս:

Անոնք առտուն նախաճաշ կ'առնեն, կէս օրին ճաշ, իսկ իրիկունը ընթրիք կ'ընեն:

99. Ծ Ո Յ Լ Ի Ն Դ Ա Ս Ս Տ Ո Ի Ն

1. Ծ՛՛յլ տղայ, եկուր փոքրիկ մեզուն
դիտէ. սա պըզտիկ մըջիւնէն դաս առ, աշխատիլ
սորվէ:

2. Նայէ՛, հուսա մեզը ժողվող մեզուն կը
բըզզայ, անի քեզի կ'ըսէ. աշխատէ՛ ծոյլ տղայ:

3. Հուտա ալ մըջիւնը կ'աշխատի
անդադար, անի պաշար կը դիզէ: Անհոգ տղայ,
դո՛ւն ալ գործէ, կ'ըսէ:

4. Եերամբ պըզտիկ ուրդ մըն է. բերանէն
թեւեր կը հանէ, խողակ կը կապէ, մեզի
փայլուն մետաքս կը հիւսէ: Անի նախ թրթուր
է՛ կը սողայ, յետոյ կը դառնայ թիթեռնիկ ու
կը թռչի:

Ան ալ քեզի կ'ըսէ. օգտակար դործ մը
ըրէ:

5. Սարգը շերամին պէս թեւեր կը հանէ,
ուտան կը հիւսէ. ան ալ ճանճեր, մժեղներ
որսալու համար թակարդ կը լարէ, կը բըռնէ
զանոնք:

6. Բայց սա ճըպուռը անհոգ է ծոյլերուն
պէս: Ան է որ ճը՛ռ ճը՛ռ, ժի՛ր ժի՛ր կ'երգէ
բոլոր ամառ: Անի անօթի կը մեռնի երբ աշուն
կուգայ:

7. Եկուր աշխատէ, տղա՛ս, ճմեռ ամառ.
չէ՛, աշխատասէր մարդը անօթի չի մնար:

Հարցափորձել մանուկները՝ յիշուած միջոցներու
աշխատութեան եւ կեանքին վրայով: Աշխատութեան սերը
գրգռել:

100. Ե Ղ Ո Ի Ն Գ Ն Ե Ր Ո Ի Ն Օ Ր Ե Ր Ը

1. Կըտրէ եղունգդ երկուշաբթին՝ կ'ըլլաս
առողջ, չուտա:

Կըտրէ զանոնք երեքշաբթին՝ դուն կ'ըլլաս
շատ հարուստ:

2. Կըտրէ զանոնք յորեքշաբթիև՝ կ'առնես բարի Լուրեր .

Կըտրէ զանոնք հինգշաբթիև՝ յուսա մէկէն նուէր :

3. Կըտրէ եղունգդ ուրբաթ օր՝ կ'առնենաս տեղ մը ցաւ .

Կըտրէ զանոնք շաբաթ՝ յիշէ հայրդ ի՛նչ խոստացաւ :

4. Հա՛, մի՛ կտրեր կիրակիի՛ն՝ չը քաշես ա՛խ վա՛խ :

Շաբթուան անուցները կարգով յուսագրել սալ :

101. ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՒԱԳՎՋԱՆԴԷՍ

1. Օն , աըլա՛ք , առնենք մեր նուագարաններ , ու կարգաւ զարնենք գեղեցիկ երգեր :

2. Թմբուկ ունինք մենք բոլորակ ու Լայն , քանի կը զարնենք , կը հանէ բա՛ր ձայն .

Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ ,
Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ , Թը՛մ :

3. Փոքրիկ ջութակի՛ս շատ Լաւ Լարած ենք , առնենք ճպտանիս երգենք ու ածենք :

ձը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ ,
ճը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ , ճը՛ղ :

4. Մեր չիք տախղներ

կը հնչեն անուշ

կը զարնենք զայն մեր

մատերով քնքուշ :

Տի՛ն, տի՛ն, տի՛ն, տի՛ն, տի՛ն,

տին, տին, տին, տին տին :

5.

Տեսէ՛ք մեր սըրինդ

որ լուռ չի մնար,

մենք զանի առինք

սուլեւու համար :

Տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ,

տիւ, տիւ, տիւ, տիւ, տիւ,

6. Ծընծղան ցնծալով

կ'առնենք ձեռքերնիս

ուժով զարնելով

կ'երգենք ամէնքնիս :

Ծի՛ն, ծի՛ն, ծի՛ն, ծի՛ն, ծի՛ն,

ծին, ծին, ծին, ծին, ծին :

7.

Փողերնուս գտա ձայն

խանդ կուտայ մեղի,

մենք կը փչենք զայն

առանց ձանձրոյթի :

Թու՛ւ, [Թու՛ւ, [Թու՛ւ, [Թու՛ւ, [Թու՛ւ,

[Թուու, [Թուու, [Թուու, [Թուու, [Թուոն :

8.

Եկէ՛ք, ընկերներ

դաշնակին վրայ

շարժենք մեր մատներ,

[Թող լաւ մը գողայ :

Տօ, սօ, սօ, բէ, մի,

ֆա, սօ, լա, սի, մի :

1. Նուագարաններու անուցներ համեկ ու գրել
ճալ :

2. ձեզորոճել անոնց յասուկ ձայները, որ . բըւ-
բուկը բը՛մ բը՛մ ձայն կը հանկ :



ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ



ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

102. ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Սուրբ Սահակ Հայոց կաթողիկոս էր, Սուրբ Մեսրոպ Հայ վարդապետ մըն էր. անոնք կ'ապրէին շատ տարիներ առաջ:

Սուրբ Մեսրոպ գտաւ մեր այս հայերէն գիրերը:

Սուրբ Սահակ գրեց հայերէն գիրքեր:

Անոնք դպրոցներ բացին գեղի ու քաղաքի մէջ:

Մեծ ու պզտիկ դպրոց գացին, հայերէն կարդալ գրել ու խօսիլ սորվեցան:

Սուրբ Մեսրոպ ծնած էր Հայաստանի Հացեկաց գեղին մէջ:

Երբ մեռաւ, զինք թաղեցին Օշական գեղին մէջ:

Մեր այս գիրքին անունը Օշական է:

Ամեն տարի մեծ հանդէսով կը տօնենք Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ Հայրապետներուն տօնը:

Մենք հայ ենք, միշտ հայերէն պիտի խօսինք:

Այս գիրքը հայերէն է. մենք հայերէն կը կարդանք:

Այս գիրքը հայերէն են, մենք հայերէն գիր կը գրենք:

Մեր երգը հայերէն է, մենք հայերէն երգեր կ'երգենք:

Ու մենք կ'ուխտենք սիրով մ'անշէջ,

վառ պահելու սիրտերնուս մէջ,

մեր մայրենի սիրուն լեզուն,

Սահակ Մեսրոպ անմահ անուն:

Խօսակցիլ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի վրայով: Այբ ու բեկի գրերով սկսած իրենց սիրած առարկաներուն կամ անձերուն անունները վերյուշել տուի:

103. Ա Շ Խ Ա Տ Ո Ի Թ Ա Ն Մ Ա Ր Ձ Ե Ր Գ

1. Օ՛ն, տըղաք, մարմնամարդ ընենք,
Ձեռքեռնիս դըրած մեր կուրծքին դիմաց,
չարժենք վեր ու վար, մէկ ձախ ու մէկ աջ.
մէկ ու երկու, մէկ ու երկու
վե՛ր, վա՛ր,
ա՛յ, ձա՛խ, վե՛ր վա՛ր:
2. Օ՛ն, տըղաք, եկէք փայտերը մանրենք,
սըղոյնիս առած, դէմ դէմի կեցած,
չարժենք ետ առաջ, ամենքնիս մէկանց.
խը՛ղը, խը՛ղը, խը՛ղը, խը՛ղը,
խը՛ղ, խը՛ղ,
խը՛րթ, խը՛րթ, խը՛ղ, խը՛ղ:
3. Օ՛ն, տըղաք, եկէք խմորնիս շաղենք,
տաշտին մէջ խառնենք ալիւրին ջուր, աղ,
թեւերնիս սօթթած թրենք խմոր դանդաղ,
ծը՛թը, ծը՛թը, ծը՛թը, ծը՛թը,
ծը՛թ, ծը՛թ,
ծը՛թ, ծը՛թ. ծը՛թ, ծը՛թ:

4. Օ՛ն, տըղաք, եկէք, մուրճ ու դուր առնենք,
քարակօփին պէս կտոր մը մարմարէն,
տաշենք, յօրինենք հերոսի մա՛նդրէն:
տա՛շը, թա՛շը, տա՛շը, թա՛շը,
տա՛շ, թա՛շ,
տաշ, թաշ, տաշ, թաշ:
5. Օ՛ն, տըղաք, եկէք, տաք երկաթ ծեծենք,
չինենք, խօփ, արօր, կացին, մուրճ, արքցան,
կըռենք պողպատէն սուսեր հրացան,
չա՛քը, չո՛ւքը, չա՛քը չո՛ւքը,
չա՛ք, չո՛ւք,
չաք, չուք, չաք, չուք:
6. Օ՛ն, տըղաք, եկէք զինամարդ ընենք,
զինուորի մը պէս հրացան մեր ուսին
անվեհեր քալենք, վանենք թըշնամին.
հապօ՛ն, յառա՛յ, հապօ՛ն յառա՛յ,
ձախ, աջ, ձախ, աջ:
(Նմանողաբար)

Խուսանչիւր աշխատութան յասուկ շարժումներով
մարդերը կասարել սալ խմբովին:

104. Վ Ե Ր Զ Ի Ն Դ Ա Ս Ը

Երբ դասի պիտի սկսէին, Օշին ձեռքը բարձրացուց. վարժուհիէն հրաման առաւ, ոտքի կեցաւ ու ըստւ. «Մեր գիրքին վերջին դասն է ասի, սիրելի ընկերներ, եկէ՛ք ամենքս միասին կարդանք:» Ամենքը միասին կարդացին. Մեր սիրական գիրքը՝ Օշականն ես. հիւս մեր սիրուն ընկերն ես դուն. չէ՛, չենք ուշեր բաժնուիլ քեզմէ. մեր քով պիտի պահենք քեզ, թէև ուրիշ գիրք մըն ալ առած ենք: Մենք շատ դասեր կարդացինք. շատ բաներ գրեցինք, օգտակար բաներ սովորեցանք քեզմէն: Հապա կրնա՞նք մոռնալ քեզ, յարգելի ուսուցիչ: Դուն շատ աշխատեցար որ՝ մենք քիչ նեղու- թիւն քաշենք. մեզի հետ խնդացիր ու խաղցար որ՝ մենք զուարթ ըլլանք ու սիրով սովորինք. ա՛հ, շատ շնորհակալ ենք քեզմէն. բայց, ըսէ սիրելի ուսուցիչ, դուն ալ գոհ եղա՞ր մեզմէ:

Ուսուցիչը ժպտեցաւ ու պատասխանեց.

— Ապրի՛ք, սիրելի մանուկներս: Դուք աշխատասէր, բարի, քաջ ու հնազանդ եղաք.

անոր համար ալ կրցաք շուտով շիտակ կարգալ, մաքուր գրել, լաւ խօսիլ: Ատոր համար ալ ես գոհ մնացի, ու սիրեցի ձեզ:

Անոնք բոլորն ալ ստքի կեցան. շատ ուրախ էին. ծափահարեցին ու գնացին ուսու- ցիչին ձեռքը թօթվեցին հատիկ հատիկ:

Երբ իրենց տեղերը վերադարձան, Արմինէ դրօշակը բռնած՝ կեցաւ կարգին դիմաց. մանջերը բարեւի կեցան ու բոլորը միասին երգեցին իրենց դպրոցին երգը.

Քաղցր օթեւան, դու վարժարան,
Տաճար Ուսման ու կրթութեան.
Համախմբուած շուքիդ ներքեւ,
Զօնես մեզի երկնապարգեւ,
Եկէ՛ք, գոչենք միաշերան,
Կեցցէ՛ Սիսուան մեր վարժարան:



ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

Ք. ու խ	Էջ
1. Օչինի գիրքը	13
2. Արև բարև	14
3. Շուն ու կատու	14
4. Տուն	14
5. Հայրդդիին աղօթքը	15
6. Ծիծեռնակ	15
7. Կապիկը	16
8. Աղքատին երգը	17
9. Դաս (արա, արապ, կարապ, կարապետ)	18
10. Ճընճղուկս	19
11. Աբգարին դասը	21
12. Կաթ կ'ուզեն	22
13. Աքլորին դասը	23
14. Անուններու պարը	24
15. Կատու, շուն, հաւ	25
16. Զգայարանքներ	25
17. Յոպոպ	26
18. Որբին վրէժը	27
19. Կը սիրեմ	28
20. Պէտքեր ու զարդեր	28
21. Որբ աղջիկին կարօտը	29
22. Անօթի մի' թողուր	30

Գլուխ	Էջ
23. Դեղ — զեղձ — զեղձանիկ	31
24. Խեղձ մուկը	31
25. Աքլոր	32
26. Թռուցիկը	34
27. Թ. կը խօսի	35
28. Պզտիկ կենդանիներ	37
29. Յորենէ հաց	37
30. Թըմ պալա բըստիկ	39
31. Խ. Ղ. խաղընիկեր	40
32. Հանելուկներ	42
33. Անուններուն պարը	43
34. Մայր ու զաւակ	44
35. Պար կար քար	45
36. Բարի օձը	46
37. Մանիկի օրօրը ***	47
38. Գ. ի՞նչ կ'ըսէ	48
39. Անուններուն պարը	49
40. Չորս եղանակները	50
41. Պետիկը	51
42. Կաղանդ պապան	52
43. Պուպրիկս ի՞նչ նուէր կ'ուզէ	54
44. Անուններուն պարը	55
45. Յ. ֆուրիկը	56
46. Հ. աղբարը	57
47. Լորիկը	58
48. Բարկէն, Պարոյր, Փայլակ	59
49. Անուններուն պարը	61
50. Աքլոր աղբարը	62


Գլուխ	Էջ
51. Մատները	63
52. Ս. ի՞նչ կ'ըսէ	64
53. Չարին պատիժը	66
54. Արաքսիին տիկիներ	67
55. Արեւ	68
56. Երկու զատիկներ	69
57. Ծիծեռնակն ու իր ձագերը ***	71
58. Պարծենքոտ աղջիկը ***	72
59. Մանուկին ազօթքը	72
60. Մանկասէր Յիսուսը	74
61. Առածներ	75
62. Պիծակին վախճանը	76
63. Ան կատուն	77
64. Մեր շունը	79
65. Երեք կզուկ քոյրերը Ա.	80
66. Երեք կզուկ քոյրերը — Բ.	82
67. Մեղուն կ'ըսէ	84
68. Ճանճը կ'ըսէ	85
69. Մօր ու զաւակի սէր	86
70. Արթին կը շահի	86
71. Բարեւէ	88
72. Վարդը ի՞նչ կ'ըսէ	89
73. Իմ դրօշակս	90
74. Ազատութիւն	91
75. Վիճակ	92
76. Ճերմակ	94
77. Կովը կաթ կուտայ	95
78. Կարմիր	96

Գլուխ	Էջ
79. Բնակարան	97
80. Կանանչ	97
81. Աննիկ ու Մաննիկ	99
82. Կապոյա	100
83. Հայելի	101
84. Դեղին	101
85. Ժամանակ	102
86. Առուն, աղբիւրը	104
87. Ժամացոյց	104
88. Ճիշտ ինձի պէս	105
89. Մէկ ու երկու	106
90. Խաղալիկներ	108
91. Գազիկ ու Արսինէ	109
92. Թէյասեղան	111
93. Զարեհի հագուստը	112
94. Լուսին	114
95. Կէտերը	115
96. Նուպարին նամակը	117
97. Արտակին պատասխանը	118
98. Ճաշի սեղանին վրայ	119
99. Ծոյլին դասատուն	120
100. Եղունգներուն օրերը	121
101. Մանկական նուագահանդէս	123
102. Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ	128
103. Աշխատութեան մարզերդ	130
104. Վերջին դասը	132



ՄԱԾԹ.— Կը խնդրուի ուսուցիչներէն որ անու-
 ցադրութեան պատճառաւ յետմնաց քանի մը տպագրական
 տառասխալները հանին իրենց ուղղելի դասի ասէն, երբ
 հանդիպին :

1870 - 1871
The following is a list of the
names of the persons who
were present at the
meeting of the
Board of Directors
of the
Company
held on
the
1st day of
January
1871.



ԳԻՆՆ 10 ՂՐԵ ԵԳ.

Ամեն իրաւունք վերադառնում Հեղինակին

ՀՀ Ազգային գրադարան



NL0242146